# ԽՈԶԵՐԻ ԲՈՆԻՏԻՐՈՎԿԱՅԻ ՀՐԱՀԱՆԳ

636
Խ-71

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ 1940

636
Խ-71

30 JUL 2010

# ԽՈԶԵՐԻ ԲՈՆԻՏԻՐՈՎԿԱՅԻ ՀՐԱՀԱՆԳ

Հ Ա Յ Պ Ե Տ Հ Ր Ա Տ
Ե Ր Ե Վ Ա Ն 1 9 4 0

13 MAY 2013

21.227

Հանր. Գրադ. Гос. Публ. Библиотека ՀՍՍՀ-ССР им. А. Мясникяна Ա. Մյասնիկյանի անվ.

983
41

ИНСТРУКЦИЯ
**по бонитировке**
**свиней**

Армгиз, Ереван, 1940 г.

Հաստատված է ԽՍՀՄ Խորտնտժողկոմատի և ԽՍՀՄ Հողժողկոմատի կողմից.

# ԽՈԶԵՐԻ ԲՈՆԻՏԻՐՈՎԿԱՅԻ ՀՐԱՀԱՆԳ

*Խոզերի վորակի լավացման հիմնական միջոցառումներից մեկը հանդիսանում է բոնիտիրովկայի անցկացումը: Բոնիտիրովկան դա յուրաքանչյուր կենդանու զարգացման, արտադրողականության, ծագման, եքստերիերի, կոնստիտուցիայի և տնտեսական ոգտակար հատկանիշների ժառանգական փոխանցման գնահատականն է: Հոտի բոնիտիրովկայի հիմքը հանդիսանում է՝ զոոտեխնիկական գրանցումների կատարումն ու ճիշտ իր ժամանակին կոնկրետ արտադրական պայմաններում կենդանիների անմիջական հսկողությունը: Բոնիտիրովկայի տվյալները ծառայեցվում են վորպես նյութ, վարազներին և մերուններին տոհմային գրքերում գրանցելու, կենդանիների ընտրության և վարազներին համապատասխան մերուններ ընտրելու* (подбор), *զուգավորման և սելեկցիոն պլանները կազմելու, հոտն արտադրական խմբերի բաժանելու, հոտի կոմպլեկտավորման և տնտեսության տոհմային աշխատանքների գնահատման համար:*

## 1. ԲՈՆԻՏԻՐՈՎԿԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. *Կոլտնտեսություններում յենթակա յեն բոնիտիրովկայի՝*

*ա) խոշոր սպիտակ անգլիական ցեղի բոլոր մաքուր-արյուն վարազները և մերունները.*

*բ) տեղական լավացրած խոզերը, վորոնցից ստացված մատղաշները աճեցվում են տվյալ տնտեսության հոտի վերականգնման կամ վաճառվում են բուծման նպատակներով.*

*գ)* ¾ *արյունից վոչ պակաս խոշոր սպիտակ անգլիական ցեղի լավագույն մետիս մերունները, վորոնցից աճեցնում են մատղաշներ տվյալ հոտի վերականգնման կամ վորպես տոհմացու վաճառման համար:*

2. *Հոտի բոնիտիրովկան կատարվում է յուրաքանչյուր տարի՝ մայիսից— ոգոստոս ամիսներին: Մատղաշ վարազացուները և մայրացուները, բացի այդ, յենթարկվում են բոնիտիրովկայի նրանց զուգավորման նշանակելու ժամանակ:*

3. Հին հրահանգներով գնահատված բոլոր հասակի կենդանիներն, ինչպես և բոնիտիրովկայի չենթարկվածները, յենթակա յեն բոնիտիրովկայի ներկա հրահանգի պահանջներին համապատասխան:

4. Խոզերի բոնիտիրովկան անց է կացվում ցեղային խմբերով, արյան չափով և գեներացիայով:

5. Կենդանիների այս կամ այն ցեղին պատկանելը և արյան աստիճանը (գեներացիան) սահմանվում է ծագման վերաբերյալ փաստացի տվյալների հիման վրա՝ (տոհմային գրանցումներ, տոհմային վկայականներ, ատեստատներ և զուգավորման վկայականներ) անպայման ստուգելով ցեղի հատկանիշների վերաբերյալ տիպիկայնությունն անմիջականորեն նայելու միջոցով:

6. Ծագման վերաբերյալ փաստացի տվյալների բացակայության դեպքում, մետիս կենդանիների գեներացիան թույլատրվում է նշանակել էքստերիերի արտաքին զննման, տիպիկայնության, արտադրողականության ցուցանիշների և տվյալ կենդանու ծագումն իմացող կողմերի հարցման միջոցով, բայց վոչ բարձր յերրորդ գեներացիայից:

Այն տնտեսություններում, վորտեղ մաքուր արյուն խոզերի բուծումը տևել է յերկար ժամանակ, բայց նրանց ծագումը ձևակերպված չէ փաստաթղթերով, հողբաժնի ավագ զոոտեխնիկի մասնակցությամբ ստեղծվում է հատուկ զոոտեխնիկական հանձնաժողով, վորը սահմանում է հարցման կարգով կամ խոզերը տվյալ տնտեսություն ներմուծելու մասին յեղած փաստաթղթերով — հոտի ծագումը, մերուններին ծածկած և ծածկող վարազների կազմը և նայում են կենդանիներին նատուրայում: Այդ տվյալների հիման վրա կազմվում է ակտ, առանձին կենդանիներին վորպես զտարյուն ձևակերպելու մասին, վորպիսին հետագայում հաստատվում է Հողժողկոմատի Անասնապահական վարչության կողմից: Առանց մասնագիտական հանձնաժողովի ակտի, զտարյուն աստիճանի փոխադրումն արգելվում է:

7. Մետիս մերուններն ու չորրորդ և բարձր գեներացիայի վարազները, այսինքն 15–16 արյունից վոչ պակաս, արյան աստիճանը հաստատող փաստաթղթերի դեպքում, վորոնք համապատասխանում են ըստ զարգացման, էքստերիերի և արտադրողականության առաջին և բարձր դասի պահանջներին, փոխադրվում են նոր ցեղային խումբ, հետագայում կոչելով այն



«խոշոր սպիտակ Б», պայմանով, վոր նրանցից ստացվեն ցեղին համապատասխան տիպիկ սերունդ:

## 2. ԲՈՆԻՏԻՐՈՎԿԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՅԵՎ ԿՄԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

8. Խոզերի բոնիտիրովկայի ընդհանուր ղեկավարությունը կոլտնտեսություններում դրվում է հողային օրգանների վրա:

9. Կոլտնտեսություններում բոնիտիրովկայի անցկացման պատասխանատվությունը դրվում է շրջհողբաժնի վարիչի և ավագ զոոտեխնիկի վրա:

10. Կոլտնտեսություններում խոզերի բոնիտիրովկան անց են կացնում ավելի աչքի ընկնող բարձրագույն կամ միջնակարգ կրթություն ունեցող վորակյալ զոոտեխնիկները: Առանձին դեպքերում բոնիտիրովկայի անցկացումը թույլատրվում է նաև պրակտիկ մասնագետներին, վորոնք գործնականում մասնակցել են զոոտեխնիկների հետ խոզերի բոնիտիրովկայի աշխատանքներին և անցել են բոնիտիրովկայի հատուկ դասընթացներ:

11. Կոլտնտեսություններում բոնիտիրովկայի անցկացման անձնական կազմը հաստատվում է Հողժողկոմատի Անասնապահական Վարչության պետի հատուկ հրամանով:

12. Խոզերի բոնիտիրովկայի անցկացման ժամանակ, մասնակցում են՝ անասնաբույժը կամ անասնաբուժակը, տվյալ տնտեսությունը կամ ֆերման սպասարկող զոոտեխնիկը, ֆերմայի վարիչը, ստախանովականները, բրիգադավարները և խոզապահները:

13. Մինչև բոնիտիրովկայի անցկացումը հողբաժնի զոոտեխնիկները պարտավոր են՝

ա) ստուգել բոնիտիրովկայի յենթակա բոլոր կենդանիների ականջի համարների լինելն ու ճշտությունը և վերականգնեցնել վոչ պարզ համարները.

բ) վերականգնել բոնիտիրովկայի յենթակա կենդանիների ցեղագրականը:

14. Համաձայն ներկա հրահանգի 5 և 6 կետերի, զոոտեխնիկը սահմանում է բոլոր վարազների, մերունների և հոտի վերականգնման մատղաշների (ремонт) գեներացիան և արյան աստիճանը: Ստանում է տոհմային տնտեսություններից ներ-

բուծված մատղաշների ծնողների արտադրողականության մասին տեղեկանքներ, իսկ առանձին աչքի ընկնող կենդանիների նկատմամբ տեղեկանքներ են ստանում նաև քույրերի և կիսաքույրերի արտադրողականության մասին:

15. Բոնիտիրովկայի աշխատանքը կատարվում է հետևյալ կերպ՝

ա) ֆերմաներում և բրիգադներում կազմակերպվում են արտադրական խորհրդակցություններ, որտեղ բացատրվում են բոնիտիրովկայի խնդիրները և նրա անցկացման կարգը.

բ) սահմանվում է խոզերի կերակրման, խնամքի և պահպանման դրությունը, որը նշվում է բոնիտիրովկայի հաշվետվությունում:

գ) ստուգվում են զոոտեխնիկական հաշվառման տվյալները, որի հիման վրա լրացվում են վարազների և մերունների բոնիտիրովկայի տեղեկագրերը:

16. Անմիջականորեն կատարվում է կենդանիների զոոտեխնիկական զննում, ստուգվում է տիպիկայնությունը և նրանց ցեղին համապատասխան կազմվածքը, որոշվում է գերությունը, յուրաքանչյուր կենդանու կշիռը և չափումները: Կենդանիների անմիջական զննման բոլոր տվյալները մտցվում են բոնիտիրովկայի տեղեկագրի համապատասխան սյունյակներում: Ցեղի և ծագման տվյալների, արտադրողականության գնահատման, զարգացման և էքստերիերի հիման վրա որոշվում է կենդանիների դասը և նրա նշանակումը: Մասնավորապես, ընդհանուր արտադրական հոտից նշվում են լավագույն մերուններն ու վարազները, որոնցից պետք է աճեցվեն իր հոտի վերականգնման և լավացման համար տոհմային մատղաշներ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Կենդանիների նայումը կատարվում է ընտանիքներով:

17. Գումարային դասով էլիտա անցած կենդանիները ենթակա են ֆոտոնկարահանման: Այդ ֆոտո նկարները կցվում են բոնիտիրովկայի տեղեկագրերին (անպայման տոհմային տնտեսությունների համար):

18. Տնտեսություններում ինֆեկցիոն հիվանդություններ լինելու դեպքում բոնիտիրովկան կատարվում է սկզբում առողջ գլխաքանակ ունեցող ֆերմաներում և վերջին հերթին վոչ բարեհաջող ֆերմաներում, ըստ որում, ինֆեկցիայի փոխանցու-



մից խուսափելու համար պետք է ձեռք առնել բոլոր անհրաժեշտ պրոֆիլակտիկ միջոցառումները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Սուր վարակիչ հիվանդությամբ հիվանդ կենդանիները յենթարկվում են բոնիտիրովկայի նրանց բուժելուց հետո:

19. Խոզերի նայումը և գնահատումը վերջացնելուց հետո, զոոտեխնիկը յուրաքանչյուր տնտեսությունում կազմում է բոնիտիրովկայի ամփոփման հաշվետվություն: Բոնիտիրովկայի արդյունքների և միաժամանակ հոտի որակի լավացման միջոցառումները քննության են առնվում կոլտնտեսության խոզապահների արտադրական խորհրդակցություններում և կոլտնտեսության վարչության նիստերում:

## 3. ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒՄՆ ՈՒ ԱԿԱՆՋԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒՄԸ

20. Բոլոր տեսակի ցեղերի և ցեղային խմբերի ցեղագրականը չխախտելու նպատակով մատղաշ վարազների անվանումը տրվում է իրենց հոր անվան նման. օրինակ՝ հոր անունը յեթե «Սեկրետ է», տղայի անունը նույնպես կլինի «Սեկրետ»: Մատղաշ մայրացուների անունը տրվում է մոր անվան համապատասխան. օրինակ՝ մոր անունը «Գիլադլիկա»; աղջկա անունը նույնպես կլինի «Գիլադլիկա»: Փաստաթղթերում անվան կողքին ցույց է տրվում կենդանու գործարանային համարը:

## 4. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

### Վ Ա Ր Ա Զ Ն Ե Ր

21. Մատղաշ վարազների առաջին գնահատումն անց է կացվում նրանց զուգավորման նշանակելու ժամանակ, ըստ հետևյալ հատկանիշների՝

ա) զարգացման.

բ) էքստերիերի, կոնստիտուցիայի և առողջության.

գ) ծնողների արտադրողականության.

22. Վարազների յերկրորդ գնահատումն անց է կացվում իրենցով բեղմնավորված մերունների ծնելուց հետո, ըստ հետևյալ հատկանիշների՝

ա) զարգացման.

բ) վարազների էքստերիերի, կոնստիտուցիայի և առողջության.

գ) սերնդի կենդանի քաշի.

դ) ծնողների արտադրողականության։

23. Վարազների յերրորդ գնահատումն անց է կացվում իրենց աղջիկներից ստացված առաջին ծնից հետո, ըստ հետևյալ հատկանիշների՝

ա) վարազների զարգացման, եքստերիերի, կոնստիտուցիայի և առողջության.

բ) աղջիկների արտադրողականության.

գ) սերունդների կենդանի քաշի։

24. Վարազների վերջնական գնահատումն անց է կացվում իրենց աղջիկների յերկրորդ ծինն ստանալուց հետո, ըստ հետևյալ հատկանիշների՝

ա) վարազների զարգացման, եքստերիերի, կոնստիտուցիայի և առողջության.

բ) իրենց աղջիկների արտադրողականության.

գ) սերունդների կենդանի քաշի։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Վարազների համար հաշվի չի առնվում իրենցով բեղմնավորված մայրերի ծների արդյունքով, ըստ հետևյալ հատկանիշների՝

ա) վերարտադրողականության ընդունակության.

բ) բեղունության և խոշորապտղատվության.

գ) աղջիկների զարգացման.

դ) աղջիկների եքստերիերի, կոնստիտուցիայի և առողջության։

25. Վարազների արտադրողականությունը որոշվում է և գնահատվում նրա արտադրողականության միջին տվյալներով։ Գնահատման համար վերցվում են հետևյալ հատկանիշները՝ (կաթնատվությունը, խոճկորների կենդանի քաշը մեկ ամսական հասակում), պտղատվությունը (կենդանի ծնված խոճկորների քանակը ծնվելու ժամանակ)։ Վարազի գնահատումն ըստ արտադրողականության անց է կացվում բոլոր հաշվի առած աղջիկներով։ Արտադրողականության դասը որոշվում է համաձայն 4-րդ հավելվածի։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Վարազներին ըստ աղջիկների արտադրողականության գնահատելիս, հաշվի չի առնվում մայրերի մթերատվությունը։



26. Հինգ աղջիկներից պակաս, կամ բոլորովին տեղեկություն չլինելու դեպքում, վարազների արտադրողականությունը որոշվում է ծնողների արտադրողականության տվյալներով (տես հավելված 1)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Հոր արտադրողականության վերաբերյալ տեղեկություններ չլինելու դեպքում, վարազի արտադրողականությունը որոշվում է մոր ցուցանիշներով։

27. Վարազների գնահատման ժամանակ ըստ մայրերի, քույրերի, կիսաքույրերի և աղջիկների արտադրողականության, հաշվի չեն առնվում ինֆեկցիոն հիվանդությամբ հիվանդացած կամ մայրերի հղիության և նոր ծնած շրջանում ինֆեկցիոն հիվանդության պատճառով զարգացմամբ հետ մնացած ծները։

28. Ներկա հրահանգում ցույց տված վարազի արտադրողականության գնահատումն ըստ աղջիկների հանդիսանում է մոտեցում, դեպի վարազի ժառանգական հատկանիշների ուսումնասիրումը։ Դրա համար տոհմային վարազի սերնդի հաշվառումն ու ուսումնասիրությունը պետք է կատարվի նրա հոտի տոհմային ծառայության ամբողջ ընթացքում։ Վարազների գնահատումն ըստ սերնդի կենդանի քաշի, որոշվում է յերկու ամսական հասակում։ Սերնդի կենդանի քաշը որոշվում է յուրաքանչյուր մերունի 4 լավ խոճկորների միջին տվյալներով (ցանկալի է յերկուսը լինեն մայրացուներ և յերկուսը վարազիկներ), բայց ոչ պակաս 5 մերունից (տես 2-րդ հավելվածը)։

## ՄԵՐՈՒՆՆԵՐ

29. Մատղաշ մոր առաջին գնահատումն անց է կացվում նրանց զուգավորման նշանակելիս, ըստ հետևյալ հատկանիշների՝

ա) մերունի զարգացման, եքստերիերի, կոնստիտուցիայի և առողջության.

բ) ծնողների արտադրողականության։

30. Յերկրորդ գնահատումն անց է կացվում առաջին ծինը ստանալուց հետո, ըստ հետևյալ հատկանիշների՝

ա) մերունի զարգացման, եքստերիերի, կոնստիտուցիայի և առողջության.

բ) մերունի արտադրողականության։

31. Յերրորդ գնահատումն անց է կացվում յերկրորդ ծինը ստանալուց հետո, ըստ հետևյալ հատկանիշների՝

ա) մերունի զարգացման, եքստերիերի, կոնստիտուցիայի և առողջության.

բ) մերունի արտադրողականության։

32. Վերջնական գնահատումն անց է կացվում յերրորդ ծինը ստանալուց հետո, ըստ հետևյալ հատկանիշների՝

ա) մերունի զարգացման, եքստերիերի, կոնստիտուցիայի և առողջության.

բ) մերունի արտադրողականության։

33. Մերունի արտադրողականության գնահատականն առաջին անգամ վորոշվում է ծնողների արտադրողականության տվյալներով (տես հավելված 1)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Հոր արտադրողականության մասին տվյալներ չլինելու դեպքում, արտադրողականությունը վորոշվում է մոր ցուցանիշներով։

34. Մերունի արտադրողականությունը յերրորդ անգամ գնահատելիս վորոշվում է առաջին յերկու ծնունդներից ամենալավով. իսկ վերջնականի դեպքում՝ առաջին յերեք ծնի յերկու լավերի միջին ցուցանիշներով։

Լավ ծին է համարվում, յերբ ծնելու ժամանակ ստացվում են մեծ թվով կենդանի խոճկորներ և մեկ ամսական հասակում ունեն լավ կենդանի քաշ։

35. Մերունի պտղատվությունը գնահատվում է կենդանի ծնված խոճկորների քանակով, հաշվի առնելով նրանց խոշորապտղատվությունը (տես 3-րդ հավելվածը)։

Այն դեպքում, յերբ մեկ խոճկորի միջին քաշը (ընում մինչև 12 խոճկոր) մեկ կիլոգրամից ցածր է, գնահատումն ըստ պտղատվության իջեցվում է մեկ դասով։ Յեթե 12 խոճկորից ավել է, այդ դեպքում իջեցում չի կատարվում։

36. Գնահատումն ըստ կաթնատվության, կատարվում է մեկ ամսական հասակի խոճկորների կենդանի քաշով (տես 3-րդ հավելվածը)։



## 5. ԳՈՒՄԱՐԱՅԻՆ ԴԱՍԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ՅԵՎ ՎԱՐԱԶՆԵՐԻ ՈՒ ՄԵՐՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՅԵՎ ԵՔՍՏԵՐԻԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

37. Մերունի և վարազի արտադրողականության գումարային դասն ըստ աղջիկների, վորոշվում է պտղատվության և կաթնատվության ցուցանիշների գնահատումով։ Այն դեպքում, յերբ պտղատվության և կաթնատվության գնահատականը չի համընկնում, գումարային դասը սահմանվում է՝ պտղատվության և կաթնատվության գնահատականները չհամընկնելու դեպքում ըստ կաթնատվության — մեկ դասով, ըստ միջանկյալ դասի — յերկու դասով, ըստ միջանկյալի բարձր ցուցանիշի — յերեք դասով։

38. Վարազների և մերունների զարգացումը գնահատվում է ըստ կենդանի քաշի, մարմնի յերկարության և կրծքի փաթի (տես հավելված 7 և 7 Ա)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Կենդանի քաշի մարմնի յերկարության և կրծքի փաթի ցուցանիշները չհամապատասխանելու դեպքում, գնահատականը կատարվում է ցածր ցուցանիշներով։

39. Կենդանի քաշի, նույնպես և մարմնի յերկարության, կրծքի փաթի, կրծքի խորության չափումները հաշվի յեն առնվում կենդանու եքստերիերային գնահատման ժամանակ, ըստ հոդվածների (տես հավելված 5)։

40. Կենդանի քաշը և չափումները սահմանվում են բոնիտիրովկայի որը։ Մարմնի յերկարությունը (ծոծրակային կատարից մինչև պոչի արմատի տարածությունը սանտիմետրներով) և կրծքի փաթը չափվում է չափաժապավենով, մնդավի բարձրությունը և կրծքի խորությունը չափվում է չափափայտով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Կենդանու մարմնի յերկարությունը և մնդավի բարձրությունը չափելու ժամանակ գլուխը և պարանոցը խիստ ցածրացրած չպետք է լինի։ Կրծքի ներքին գիծը, պարանոցը և գլուխը այդ դեպքում պետք է մի հարթության վրա լինեն, իսկ մեջքի գիծը չպետք է կորացած լինի վերև կամ ներքև, կենդանու անկանոն կանգնելու հետևանքով։

41. Մերուններին հղիության 4-րդ ամսում կշռելն արգելվում է. այդ դեպքում մերունի կենդանի քաշը գրվում է իրենց վերջին կշռման քաշը:

42. Վարազների և մերունների էքստերիերը որոշվում է կենդանուն անմիջականորեն նայելու միջոցով և զանազան հոդվածների գնահատումն ըստ հարյուր բալլային շկալայի, հաշվի առնելով կենդանու զարգացումը և էքստերիերի նկարագրությունն ըստ բանալու— (տես հավելված 5,6):

43. Խոշոր սպիտակ անգլիական ցեղի խոզերը և նրա մետիսները գնահատվում են № 5 շկալայով:

44. Կենդանու արտադրողականության տվյալների բացակայության դեպքում, կենդանին բոնիտիրովկայի յե յենթարկվում ըստ էքստերիերի, կոնստիտուցիայի, առողջության և զարգացման: Բոնիտիրովկայի տեղեկագրում նշում է արվում այն մասին, վոր դասային գնահատումը կատարվել է ըստ էքստերիերի և զարգացման, իսկ «գումարային դասի» սյունյակում, ցույց է տրվում «առանց արտադրողականության գնահատման»:

45. Վերջնական գնահատումից հետո կենդանու դասի բարձրացումը կարող է կատարվել հետևյալ դեպքերում՝

ա) վարազների նկատմամբ — յեթե նրանց աղջիկներն արտադրողականության հաջորդաբար բարձրացում են տալիս, իսկ վարազների զարգացման և էքստերիերի ցուցանիշները կլինեն վոչ պակաս պահանջված համապատասխան բարձր դասից.

բ) մերունների նկատմամբ—յերբ 4 ծնունդից միջին թվով 3 լավ
« 5 » « 3 »
« 6 » « 4 »
« 7 և բարձր 5 »
ծինով կտացվեն մթերատվության բարձր ցուցանիշներ, ընդդեմ հաշվի առած վերջնական գնահատականի, իսկ մերունի զարգացման և էքստերիերի ցուցանիշները ցածր չեն լինի բարձրացրած դասի պահանջից:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Յեթե մերունն արտադրողականության վերջնական գնահատումից հետո հաջորդ ծնունդներում խիստ իջեցնում է արտադրողական ցուցանիշները, ապա նրա հետագա օգտագործման հարցը, իջեցման պատճառները պարզաբանելուց հետո, վորոշվում է



զոոտեխնիկական անասնաբուժական հանձնաժողովի կողմից:

## 6. ՎԱՐԱԶՆԵՐԻ ՅԵՎ ՄԵՐՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

46. Բոնիտիրովկայի ժամանակ մաքուր-արյուն մետիս և տեղական լավացրած մերուններն ու վարազները բաժանվում են 4 դասի՝ էլիտա, առաջին դաս, յերկրորդ դաս, և յերրորդ դաս:

### Ա. ՎԱՐԱԶՆԵՐԻ ԴԱՍԵՐԸ

47. Էլիտայի դասն են անցկացվում վարազները, վորոնք համապատասխանում են հետևյալ պահանջներին՝

ա) առողջ, ամուր կոնստիտուցիայով, առանց էքստերիերային արատների, ունեն վոչ պակաս 12 նորմալ պտուկներ, էքստերիերային գնահատման ժամանակ ստացել են 90 բալլից վոչ պակաս և ըստ զարգացման ունեցած ցուցանիշները էլիտայի դասի յեն:

բ) ըստ արտադրողականության — էլիտայի դասի յեն.

գ) ըստ սերնդի կենդանի քաշի — վոչ պակաս առաջին դասից:

48. Առաջին դասն են անցկացվում այն վարազները, վորոնք բավարարում են հետևյալ պահանջներին՝

ա) առողջ, ամուր կոնստիտուցիայով, ունեն վոչ պակաս 12 նորմալ պտուկներից և էքստերիերի գնահատման ժամանակ ստացել են 85 բալլից վոչ պակաս, ըստ զարգացման բավարարում են առաջին դասի պահանջներին, դրա հետ միասին չպետք է թույլ տրվեն էքստերիերային հետևյալ արատներ՝ մեջքի կորություն, թիակների յետևի սղմվածություն, ցած ընկած կապահոդեր (проступающие бабки).

բ) ըստ արտադրողականության — առաջին դասի յեն.

գ) ըստ սերնդի կենդանի քաշի — վոչ պակաս յերկրորդ դասից:

49. Յերկրորդ դասն են անցկացվում այն վարազները, վորոնք բավարարում են հետևյալ պահանջներին՝ ա) առողջ, ամուր կոնստիտուցիայով, էքստերիերային գնահատման ժամանակ ստացել են 80 բալլից վոչ պակաս. Ըստ զարգացման ունեն յերկրորդ դասի ցուցանիշներից վոչ պակաս. դրա հետ միասին չպետք է թույլ տալ հետևյալ արատներ՝ կոր ընկած մեջք, թիակների հետևի սղմվածություն:

բ) ըստ արտադրողականության — յերկրորդ դասի յեն․

դ) ըստ սերնդի կենդանի քաշի — վոչ պակաս յերրորդ դասից։

50․ Յերրորդ դասն են անցկացվում այն վարազները, վորոնք եքստերիերային գնահատման ժամանակ ստացել են 80 բալլից վոչ պակաս և յերրորդ դասի յեն ըստ զարգացման, ըստ արտադրողականության և ըստ սերնդի կենդանի քաշի։

51․ Արտադասային խումբն են անցկացվում այն վարազները, վորոնց ցուցանիշներն ըստ զարգացման յերրորդ դասի պահանջներից ցածր են կամ թե չէ, ունեն խիստ արտահայտված եքստերիերային արատներ՝ մեջքի կորություն, թիակների հետևի սեղմվածություն, ցած ընկած կապահոդեր, վորոնք փոխանցվում են ժառանգներին։

## Բ. ՄԵՐՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԵՐԸ

52․ Ելիտայի դասն են անցկացվում այն մերունները, վորոնք համապատասխանում են հետևյալ պահանջներին՝

ա) առողջ, ամուր կոնստիտուցիայով, առանց եքստերիերային արատների, ունեն վոչ պակաս 12 նորմալ պտուկներից, եքստերիերային գնահատման ժամանակ ստացել են 90 բալլից վոչ պակաս և ըստ զարգացման համապատասխանում են ելիտայի դասի պահանջներին․

բ) ըստ արտադրողականության— ելիտայի դասի յեն։

53․ Առաջին դասն են անցկացվում այն մերունները, վորոնք համապատասխանում են հետևյալ պահանջներին՝

ա) առողջ, ամուր կոնստիտուցիայի, ունեն վոչ պակաս 12 նորմալ զարգացած պտուղներից, եքստերիերային գնահատման ժամանակ ստացել են 80 բալլից վոչ պակաս և ըստ զարգացման համապատասխանում են առաջին դասի պահանջներին, դրա հետ միասին, չպետք է թույլ տրվեն հետևյալ թերևս թույլ արտահայտված եքստերիերային պակասություններ՝ մեջքի նկատվող մշտական կորություն, թիակների հետևի սղմվածություն, ցած ընկած կապահոդեր, կարճ խթանաձև հետույք (шилообразный зад)։

բ) ըստ արտադրողականության — առաջին դասի յեն։

54․ Յերկրորդ դասն են անցկացվում այն մերունները, վորոնք համապատասխանում են հետևյալ պահանջներին՝

ա) առողջ, ամուր կոնստիտուցիայով, ունեն վոչ պակաս



12 զարգացած պտուկներից, եքստերիերի գնահատման ժամանակ ստացել են 70 բալլից վոչ պակաս և ըստ զարգացման համապատասխանում են յերկրորդ դասի պահանջներին․ դրա հետ միասին չպետք է թույլ տրվեն՝ մեջքի կորություն (մշտական նկատվող) և թիակի հետևի սղմվածություն։

բ) ըստ արտադրողականության — յերկրորդ դասի յեն։

55․ Յերրորդ դասն են անցկացվում այն մերունները, վորոնք ունեն ըստ արտադրողականության, զարգացման և եքստերիերի յերրորդ դասի գնահատական։

56․ Մերունները, վորոնց արտադրողականության կամ զարգացման ցուցանիշները ցածր են յերրորդ դասից, կամ ունեն մեջքի խիստ կորություն, թիակների հետևի սղմվածություն, վորոնք փոխանցվում են ժառանգաբար, անց են կացվում արտադասային խումբը։

57․ Վարազները և մերունները ելիտայի, առաջին և յերկրորդ դասն անցկացնելու անհրաժեշտության դեպքում, վորոնք բոլոր ցուցանիշներից գնահատականներ չունեն (զարգացում, եքստերիեր, արտադրողականություն, սերնդի կենդանի կշիռ) գնահատվում են մեկ ցուցանիշը չհամապատասխանելու դեպքում, հակառակ բարձր ցուցանիշի, մեկ դաս ցածր և յերկու ցուցանիշի չհամապատասխանելու դեպքում, նրանցից ցածրով։

Կենդանիների դասի վորոշումը պետք է նայվեն վորպես կենդանիների գնահատման առաջին մոտեցում․ դրա համար վարազների և նրանց համապատասխան մերունների ընտրությունը պետք է կատարվի ծնողների ու նրանց նախնիների անհատական հատկությունները նկատի առնելով (եքստերիերը, զարգացումը, արտադրողականությունը և իրենց հատկանիշների փոխանցումը սերնդին) այն հաշվով, վորպեսզի ապահովվի սերնդում՝

ա) արյան չափի բարձրացումը (գեներացիա)․

բ) արտադրողականության բարձրացումը,

գ) կոնստիտուցիայի և եքստերիերի լավացումը,

դ) կենդանի քաշի բարձրացումը, վաղահասությունը և կենդանու չափումները։

58․ Հողբաժինը և զոոտեխնիկները, ոգտագործելով բոնիտիրովկայի նյութերը կազմում են՝

ա) յուրաքանչյուր արտադրողի և մերունի ընթացիկ տարվա զուգավորման պլանը, վարազներին համապատասխան մերունների անհատական ընտրության հիման վրա (подбор)։

բ) տոհմային խոզերով կոմպլեկտավորված հոտի պլանը, ցածրորակ մերուններն և վարազները բարձրորակ կենդանիներով փոխարինելու ժամկետները և կարգը․

գ) տոհմային մատղաշների լավացման, ընտրության և աճեցման միջոցառումներն ու հասակավոր հոտի կազմի լավացման միջոցառումները, ցուցմունքներ զոոտեխնիկական հաշվառման լավացման և անցկացման վերաբերյալ։

## 7. ՀՈՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԸՍՏ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ

59․ Բոնիտիրովկայի հիման վրա մեծահասակ խոզերը բաշխվում են՝

### Ա․ ՏՈՀՄԱՅԻՆ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ըստ ընտանիքների։ Ընտանիքին միացվում է՝ մայրը (նախնին), աղջիկները, թոռները, ծոռները և ծոռի ծոռներն, այսինքն մերուններ, որոնք ունեն ընդհանուր նախնի, ցեղագրական 4 գեներացիայի սահմաններում։ Հանձնաժողովը բոնիտիրովկայի տվյալների վերլուծման հիման վրա ընտրում է լավագույն ընտանիքներ կամ առանձին կենդանիների տոհմային հոտի վերարտադրողականության նպատակով, իսկ ցածրորակ կենդանիները հանձնվում են մյուս կոլտնտեսություններին։

### Բ․ ՎՈՉ ՏՈՀՄԱՅԻՆ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ա) տոհմային կորիզ․

բ) հոտի վերարտադրողականության խումբ․

գ) բտման խումբ․

Տոհմային կորիզ են նշանակվում ըստ ծագման, կոնստիտուցիայի, էքստերիերի, զարգացման և արտադրողականության լավագույն վարազներն ու մերունները։ Տոհմային կորիզի վարազներից ու մերուններից ստացված սերունդը աճեցվում է կոլխոզների հոտի վերականգնման ու լայնացման համար, ինչպես և որպես տոհմացու վաճառելու։

Վերարտադրվող հոտի խմբում նշանակվում են մնացած վարազներն ու մերունները, որոնք պիտանի յեն վերարտադրության նպատակների համար։

Բտման խմբում նշանակվում են վերարտադրող խմբի հոտի մերուններից և վարազներից ստացված մատղաշները, նույնպես և մեծահասակ վարազներն ու մերունները, որոնք պիտանի չեն վերարտադրության նպատակների համար։



60․ Արգելվում է օգտագործել վերարտադրության նպատակով տոհմային և արտադրական հոտերից այնպիսի վարազներ և մերուններ, որոնք չեն բավարարում տվյալ ցեղի ստանդարտի պահանջներին։

61․ Կոլտնտեսություններում բոնիտիրովկայի ժամանակ ընդհանուր արտադրական հոտից պարտադիր կարգով առանձնացվում է լավագույն մերունների խումբ, որոնցից պետք է աճեցվեն տոհմային մատղաշներ իրեն հոտի վերականգման և լայնացման համար։

## 8. ՎԱՐԱԶԱՑՈՒ ՅԵՎ ՄԱՅՐԱՑՈՒ ՄԱՏՂԱՇՆԵՐԻ ՏՈՀՄԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

62․ Վարազների և մերունների բոնիտիրովկայի հետ միաժամանակ բոնիտյորը նայում է յերկուսից մինչև 10 ամսական վարազիկներին ու մայրացուներին, որոնք առանձնացված են տվյալ տնտեսության տոհմային հոտի վերականգնման կամ լրացման համար։

63․ Բոնիտյորը նախորոք հոտի վերականգնման, մատղաշների ծագման, ցեղի, արյան չափի, հասակի տվյալները մըտցնում է հոտի վերականգնման, մատղաշների նայման տեղեկագրում (Հավելված 9)։ Այդ տվյալները դուրս են գրվում տընտեսության տոհմային գրանցումներից։ Հոտի վերականգնման մատղաշների հենց այդ բոնիտիրովկայի ցուցակում գրանցվում են ծնողների արտադրողականության և զարգացման տվյալները։ Բոնիտիրովկայի ժամանակ կատարվում է յուրաքանչյուր կենդանու կշռումը, չափումները և ստուգվում են ականջի համարներն ու հայտնաբերվում մարմնակազմի պակասությունները։

64․ Բոնիտյորը կենդանիների հասակի, կենդանի քաշի, չափումների, մարմնակազմի պակասությունների նշանների տվյալների հիման վրա տոհմային մատղաշի զարգացման չկալայով վորոշում է թե վոր դասին է պատկանում տվյալ վարազիկը կամ մայրացուն (Հավելված 2)։

ԾԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ․— Հոտի վերականգնման մատղաշների չափումները կատարվում են 6 ամսական հասակից։ Կենդանի քաշի և մարմնի յերկարության ցուցանիշները չհամապատասխանելու դեպքում, կենդանին գնահատվում է ցածր ցուցանիշներով։

ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ՀՍՍՀ-ССР

65. Տոհմային մատղաշի նայման բոլոր տվյալները բոնիտյորը մտցնում է տեղեկագրում և ապա կազմում է ամփոփման հաշվետվություն հոտի վերականգնման, վարազիկների և մայրացուների նայման համաձայն:

66. Հոտի վերականգնման, վարազիկների և մայրացուների ամփոփման հաշվետվություն կազմելիս, այդպիսին տրվում է երկու աղյուսակով (տես հավելված 10 և 11): Նրանցից մեկը ցույց է տալիս հոտի վերականգնման մատղաշի զարգացման դասային գնահատումը, իսկ երկրորդում տրվում է ամփոփման հաշվետվություն ծնողների որակի մասին, որոնցից թողնվել են հոտի վերականգնման մատղաշները:

## 9. ԽՈԶԵՐԻ ԲՈՆԻՏԻՐՈՎԿԱՅԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

67. Վարազների և մերունների բոնիտիրովկայի տեղեկագրերի (հավելված 12,13) և հոտի վերականգնման մատղաշների նայման տեղեկագիրը (հավելված 9) բոնիտյորի կողմից լրացվում է և ներկայացվում՝

ա) շրջհողբաժնին մեկ օրինակից.

բ) յուրաքանչյուր կոլտնտեսությունում բոնիտիրովկայի տվյալներն անպայման մտցվում են տոհմային (գործարանային) քարտերում: Քարտեր չլինելու դեպքում կոլտնտեսություններում թողնել տեղեկագրերի մեկ օրինակը.

68. Վարազների, մերունների և հոտի վերականգնման, մատղաշների նայման, բոնիտիրովկայի ամփոփման հաշվետվությունը (տես հավելված 10,11,14,15) լրացվում է և ներկայացվում հետևյալ կարգով՝

ա) շրջանի կոլտնտեսությունների տոհմային հոտի վերաբերյալ ամփոփման հաշվետվությունը կազմվում է հողբաժնի զոոտեխնիկի կողմից երկու օրինակ, որից մեկը թողնվում է հողբաժնում, մյուսը ներկայացվում է հանրապետության Հողժողկոմատին:

բ) Տոհմային հոտի վերաբերյալ հանրապետության Հողժողկոմատի կողմից կազմվում է ամփոփման հաշվետվություն երկու օրինակից, որից մեկն ուղարկվում է ԽՍՀՄ Հողժողկոմատին, մյուսը մնում է տեղում:

69. Բոնիտիրովկայի տեղեկագրերը և ամփոփված հաշվետվությունները կոլտնտեսությունների կողմից ներկայացվում



են համապատասխան ինստանցիային, բոնիտիրովկայի ավարտելուց ոչ ուշ 10 օր հետո:

70. Հողբաժինը բոնիտիրովկայի վերաբերյալ ամփոփված հաշվետվությունը ներկայացնում է համապատասխան ինստանցիային ոչ ուշ, քան 20/9-ի:

71. Կոլխոզի բոնիտյոր զոոտեխնիկը ներկայացնում է ՊՏԳ տեսչությանը մերունների, վարազների և հոտի վերականգնման մատղաշների վերաբերյալ քարտեր (հաստատված ձևերով), որոնք բավարարում են ՊՏԳ գրանցման պահանջներին:

72. Մեծահասակ կենդանիների համար, որոնք ստացել են էլիտա դասի գնահատական, լրացվում են երկու օրինակից անհատական տոհմային քարտեր, որից մեկն ուղարկվում է ԽՍՀՄ Հողժողկոմատին, իսկ մյուսը մնում է հանրապետության Հողժողկոմատում:

Ներկա հրահանգի հրատարակությամբ նախկին բոլոր հրահանգները համարվում են չեղյալ:

Հավելված 1

### ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԻ ՎՈՐՈՇՈՒՄՆ ԸՍՏ ԾԱԳՄԱՆ

| | Ծնողների դասերի զուգակցումն ըստ արտադրողականության | Մայրացուլի և վարազիկի դասն ըստ արտադրողականության |
|---|---|---|
| 1 | Էլ.—Էլ | Էլ |
| 2 | Էլ.—1-ին դաս | Էլ |
| 3 | Էլ.—2-դ » | 1 դաս |
| 4 | Էլ.—3-դ » | 2 » |
| 5 | 1 դաս—1 » | 1 » |
| 6 | 1 » —2 » | 2 » |
| 7 | 1 » —3 » | 2 » |
| 8 | 2 » —2 » | 2 » |
| 9 | 2 » —3 » | 2 » |
| 10 | 3 » —3 » | 3 » |

Հավելված 3

## ԲՈՆԻՏԻՐՈՎԿԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ ՄԵՐՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՇԿԱԼԱՆ

| Մերունների ցեղը կամ ցեղային խումբը | Մերունի դասը | Ծնվելու ժամանակ ընդամենը կենդանի խոճկորներ ոչ պակաս | Բնի ընդհանուր քաշը մեկ ամսական հասակում կիլոներով |
|---|---|---|---|
| Սպիտակ խոշոր անգլիական և տեղական լավացրած մերուններ | Էլիտա | 12 | 70 |
| | 1 | 11 | 60 |
| | 2 | 10 | 50 |
| | 3 | 8 | 40 |

Հավելված 4

## ՎԱՐԱԶՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՇԿԱԼԱՆ ԸՍՏ ՍԵՐՆԴԻ

| Վարազի դասը | Առաջին անգամ ծնածների պտղաբերությունը | Խոճկորների ընդհանուր քաշը մեկ ամս. հասակում | Երկու անգամ ծնածների պտղաբերությունը (լավ ծինով) | Խոճկորների ընդհանուր քաշը մեկ ամսական հասակում կիլոներով |
|---|---|---|---|---|
| Էլիտա | 10-ից բարձր | 55 | 11-ից բարձր | 66 |
| 1 | 9,0—9,9 | 45 | 10,0—10,9 | 55 |
| 2 | 8,0—8,9 | 40 | 9,0— 9,9 | 45 |
| 3 | 7,0—7,9 | 35 | 8,0— 8,9 | 40 |

Հավելված 5

## ԽՈՇՈՐ ՍՊԻՏԱԿ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՑԵՂԻ ԽՈԶԵՐԻ ԷՔՍՏԵՐՅԵՐԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

| № № | Էքստերիերի հոդվածները | Գնահատումը: Վարազների համար մաքսիմալ բալլը | Գնահատումը: Մերուների համար մաքսիմալ բալլը | Էքստերիերային հիմնական նշանները | Արատներ և պակասություններ |
|---|---|---|---|---|---|
| | Ընդհանուր տեսքը և կոնստիտուցիան | | | | |
| 1 | Ցեղի նշանները | 5 | 5 | Տիպիկ և ցեղի համար, կենդանին լավ հասակ ունի, բավական բարձր և ամուր վոտներով: | Վատ և զարգացած, տիպիկ չէ, ուժեղ ձգված, ցայտուն տափակ կողերով կամ կարճամարմին, կարճ վոտներով: |
| 2 | Կոնստիտուցիան և ձևերը | 8 | 8 | Առողջ, ամուր, կենդանին համաչափ զարգացած, ամրակազմ տիպի, լավ կրունկներով (колодкой), հանդիստ խառնվածքով (темперамент): | Թույլ վոսկրակազմ, մարմնի մասերի անհամաչափ զարգացում, փխրուն կամ չափազանց կոպիտ տիպ, Թմրած, սառնարյուն (ֆլեգմատիկ) կամ նյարդային խառնվածք: |
| 3 | Շարժումը | 5 | 5 | Քայլելիս ազատ, վստահ, առանց հետևը շարժելու: | Վոչ յեռանդոտ, կաշկանդված, քայլելիս հետևին ուժեղ կերպով շարժում է: |

*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Կենդանիները, վորոնք ունեն կենդանի քաշի, մարմնի յերկարության, կրծքի փաթի առաջին դասի պահանջներից վոչ պակաս ցուցանիշներ (տես զարգացման շկալան) ըստ ընդհանուր տեսքի և կոնստիտուցիայի, գնահատվում են բարձր բալլով:*

# ԲՈԼՈՐ ՑԵՂԵՐԻ ՅԵՎ ՑԵՂԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՏՈՀՄԱՅԻՆ ՄԱՏՂԱՇՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՇԿԱԼԱՆ

(բացի բերկշիրից)

| ՀԱՍԱԿԸ | Վարազիկներ | | | | | | | | Մայրացուներ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Էլիտա | | 1—դաս | | 2—դաս | | 3—դաս | | Էլիտա | | 1—դաս | | 2—դաս | | 3—դաս | |
| | Քաշը կ. գ. | Յերկար. ս. մ. | Քաշը կ. գ. | Յերկար. ս. մ. | Քաշը կ. գ. | Յերկար. ս. մ. | Քաշը կ. գ. | Յերկար. ս. մ. | Քաշը կ. գ. | Յերկար. ս. մ. | Քաշը կ. գ. | Յերկար. ս. մ. | Քաշը կ. գ. | Յերկար. ս. մ. | Քաշը կ. գ. | Յերկար. ս. մ. |
| | (վոչ պակաս) | | | | | | | | (վոչ պակաս) | | | | | | | |
| 2 ամիս | 20 | — | 15—19,9 | — | 12—14,9 | — | 10—11,9 | — | 18 | — | 14—17,9 | — | 12—13,9 | — | 10—11,9 | — |
| 2 » 10 որ | 24 | — | 18—23,9 | — | 15—17,9 | — | 12—14,9 | — | 22 | — | 17—21,9 | — | 15—16,9 | — | 12—14,9 | — |
| 2 » 20 » | 29 | — | 22—28,9 | — | 18—21,9 | — | 15—17,9 | — | 27 | — | 21—26,9 | — | 18—20,9 | — | 15—17,9 | — |
| 3 ամիս | 34 | — | 26—33,9 | — | 22—25,9 | — | 18—21,9 | — | 32 | — | 25—31,9 | — | 22—24,9 | — | 18—21,9 | — |
| 3 » 10 որ | 39 | — | 30—38,9 | — | 25—29,9 | — | 20—24,9 | — | 36 | — | 28—35,9 | — | 25—27,9 | — | 20—24,9 | — |
| 3 » 20 » | 44 | — | 34—43,9 | — | 29—33,9 | — | 23—28,9 | — | 41 | — | 32—40,9 | — | 29—31,9 | — | 23—28,9 | — |
| 4 ամիս | 49 | — | 38—48,9 | — | 33—37,9 | — | 26—32,9 | — | 46 | — | 36—45,9 | — | 33—35,9 | — | 26—32,9 | — |
| 4 » 10 որ | 54 | — | 42—53,9 | — | 37—41,9 | — | 29—36,9 | — | 50 | — | 40—49,9 | — | 36—39,9 | — | 29—35,9 | — |
| 4 » 20 » | 59 | — | 47—58,9 | — | 41—46,9 | — | 32—40,9 | — | 55 | — | 44—54,9 | — | 40—43,9 | — | 32—39,9 | — |
| 5 ամիս | 64 | — | 52—63,9 | — | 45—51,9 | — | 36—44,9 | — | 60 | — | 48—59,9 | — | 44—47,9 | — | 36—43,9 | — |
| 5 » 10 որ | 69 | — | 57—68,9 | — | 49—56,9 | — | 38—48,9 | — | 64 | — | 52—63,9 | — | 48—51,9 | — | 38—47,9 | — |
| 5 » 20 » | 74 | — | 62—73,9 | — | 53—61,9 | — | 41—52,9 | — | 69 | — | 56—68,9 | — | 52—55,9 | — | 41—51,9 | — |
| 6 ամիս | 80 | 110 | 67—79,9 | 106—109 | 58—66,9 | 98—105 | 45—57,9 | 86—97 | 74 | 106 | 61—73,9 | 102—105 | 56—60,9 | 94—101 | 45—55,9 | 82—93 |
| 6 » 10 որ | 85 | 112 | 72—84,9 | 108—111 | 62—71,9 | 100—107 | 48—61,9 | 88—99 | 79 | 108 | 65—78,9 | 104—107 | 60—64,9 | 96—103 | 48—59,9 | 84—95 |
| 6 » 20 » | 90 | 114 | 77—89,9 | 110—113 | 66—76,9 | 102—109 | 51—65,9 | 90—101 | 84 | 110 | 70—83,9 | 106—109 | 64—69,9 | 98—105 | 51—63,9 | 86—97 |
| 7 ամիս | 96 | 117 | 82—95,9 | 112—116 | 71—81,9 | 102—111 | 55—70,9 | 92—101 | 89 | 113 | 75—88,9 | 108—112 | 69—74,9 | 99—107 | 55—68,9 | 88—98 |
| 7 » 10 որ | 101 | 119 | 87—100,9 | 114—118 | 75—86,9 | 104—113 | 58—74,9 | 94—103 | 94 | 115 | 80—93,9 | 110—114 | 73—79,9 | 101—109 | 58—72,9 | 90—100 |
| 7 » 20 » | 106 | 121 | 92—105,9 | 116—120 | 79—91,9 | 106—115 | 62—78,9 | 96—105 | 99 | 117 | 85—98,9 | 112—116 | 77—84,9 | 103—111 | 62—76,9 | 92—102 |
| 8 ամիս | 112 | 124 | 97—111,9 | 118—123 | 84—96,9 | 108—117 | 66—83,9 | 98—107 | 104 | 120 | 90—103,9 | 115—119 | 82—89,9 | 104—114 | 66—81,9 | 94—103 |
| 8 » 10 որ | 117 | 126 | 102—116,9 | 120—125 | 88—101,9 | 110—119 | 69—87,9 | 100—109 | 109 | 122 | 95—108,9 | 116—121 | 86—94,9 | 106—115 | 69—85,9 | 96—105 |
| 8 » 20 » | 122 | 128 | 107—121,9 | 122—127 | 92—106,9 | 112—121 | 73—91,9 | 102—111 | 114 | 124 | 100—113,9 | 118—123 | 90—99,9 | 108—117 | 73—89,9 | 98—107 |
| 9 ամիս | 128 | 131 | 112—127,9 | 124—130 | 97—111,9 | 114—123 | 77—96,9 | 104—113 | 120 | 126 | 105—119,9 | 119—125 | 95—104,9 | 109—118 | 77—94,9 | 99—108 |
| 9 » 10 որ | 133 | 133 | 117—132,9 | 126—132 | 101—116,9 | 116—125 | 80—100,9 | 106—115 | 125 | 128 | 110—124,9 | 121—127 | 99—109,9 | 111—120 | 80—98,9 | 101—110 |
| 9 » 20 » | 138 | 135 | 122—137,9 | 128—134 | 105—121,9 | 118—127 | 84—104,9 | 108—117 | 130 | 130 | 115—129,9 | 123—129 | 103—114,9 | 113—122 | 84—102,9 | 103—112 |
| 10 ամիս | 144 | 138 | 128—143,9 | 130—137 | 110—127,9 | 120—129 | 88—109,9 | 110—119 | 136 | 132 | 120—135,9 | 124—131 | 107—119,9 | 114—123 | 88—106,9 | 104—113 |
| 10 » 10 որ | 149 | 140 | 133—148,9 | 132—139 | 114—132,9 | 122—131 | 91—113,9 | 112—121 | 141 | 134 | 125—140,9 | 126—133 | 111—124,9 | 116—125 | 91—110,9 | 106—115 |
| 10 » 20 » | 154 | 142 | 138—153,9 | 134—141 | 118—137,9 | 124—133 | 95—117,9 | 114—123 | 146 | 136 | 130—145,9 | 128—135 | 115—129,9 | 118—127 | 95—114,9 | 108—117 |
| 11 ամիս | 160 | 145 | 144—159,9 | 136—144 | 123—143,9 | 126—135 | 99—122,9 | 116—125 | 151 | 138 | 135—150,9 | 129—137 | 119—134,9 | 119—128 | 99—118,9 | 109—118 |
| 11 » 10 որ | 165 | 147 | 149—164,9 | 138—146 | 127—148,9 | 128—137 | 102—126,9 | 118—127 | 155 | 140 | 140—154,9 | 131—139 | 122—139,9 | 121—130 | 102—121,9 | 111—120 |
| 11 » 20 » | 170 | 149 | 154—169,9 | 140—148 | 131—153,9 | 130—139 | 106—130,9 | 120—129 | 160 | 142 | 145—159,9 | 133—141 | 126—144,9 | 123—132 | 106—125,9 | 113—122 |
| 12 » | 176 | 152 | 160—175,9 | 142—151 | 136—159,9 | 132—141 | 110—135,9 | 122—131 | 165 | 144 | 150—164,9 | 134—143 | 130—149,9 | 124—133 | 110—129,9 | 114—123 |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Դասը վորոշվում ե ըստ ցածր ցուցանիշների գնահատականի. որինակ՝ 8 ամսական վարազիկն ունի 119 սմ. մարմնի յերկարություն, իսկ կենդանի քաշը 112 կ. գ., այդպիսի դեպքում վարազիկը պետք ե դասվի առաջին դասին, քանի վոր ցածր ցուցանիշը (յերկարությունը 118 սմ.) բավարարում ե առաջին դասի պահանջներին։

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4 | Գլուխը և պարանոցը | | | | |
| 4 | Գ. ուխը | 6 | 6 | Վոչ կոպիտ, չափավոր մեծության, պրոֆիլի ծավածքի ցայտուն արտահայտությամբ, ճակատը լայն: Դունչը լայն, չափավոր յերկար, ծնոտները միանման յերկարության (ճիշտ կծում): Գանաչներն ամուր, լայն դրվածքով, մոտ: Աչքերը լայն դրվածքով: Տեսքը յեռանդոտ, ականջները բարակ, ասաձգական: | Չափազանց կոպիտ, խոշոր, պրոֆիլի առանց բավականաչափ ծավածքի, մոպսանման: Ճակատը նեղ, դունչը նեղ, չափազանց յերկար կամ խիստ կարճացած: Մի ծնոտը մյուսից կարճ: Գանաչները նեղ, վոչ բավարար մըկանային, խոնավ: Աչքերը նեղ դրվածքով, տեսքը թմրած, չըդիկ, ականջները հաստ, ձլորած: |
| 5 | Պարանոցը | 2 | 2 | Չափավոր յերկարության, մկանային, վոչ կոպիտ, վերևի մասն առանց կատարի, մարմնի հետ միաձուլված առանց խիստ անցման (перехода): | Չափազանց յերկար կամ չափազանց կարճ, կոպիտ, խոզատեղի (щетинный) կատարով, վորը մարմնին միացված ե խիստ անցումով: |
| | Մարմնի առջևի մասը | | | | |
| 6 | Մնդավը և ուսերը | 4 | 4 | Ուսերը լայն, չեղ դրվածքով, լավ բոլորապատած մսով, միացված մեջքի հետ առանց սեղմվածության: Մնդավը լայն, բարձր, ուղիղ և թիակների մեջ առանց նվազելու (без западин): | Նեղ ուսեր, կոպիտ, դուրս ցցված ծանր բիակ, թույլ բոլորապատած մսով, մեջքի միացման տեղում սղմվածություն: Թիակների վրա ծալքեր: Մնդավը նեղ, սուր կամ թիակների միջև նվազած: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7 | Վոտները | 5 | 5 | Զոր, լավ դրվածքով, մարմնի տակը չհավաքած, լավ արտահայտված ծունկով, կապահոդերը (бабки) ուղիղ, կարճ, բավական պարզացած, կճղակներն ամուր, բավականին զարգացած: | Վոտները խոնավ, վոչ ճիշտ դրվածքով (իքսաձև) խիստ հավաքված մարմնի տակ, այծոտուկ, թույլ, փուխր կճղակներ, դուրս ընկած կապահոդով (проступающая бабка): |
| 8 | Կուրծքը | 8 / 17 | 6 / 15 | Լայն և խորը: | Նեղ, վոչ խորը, թիակների հետևը խիստ սղմված: |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Կրծքի խորության առաջին դասի պահանջից վոչ ցածր ցուցանիշ ունեցող կենդանիները գնահատվում են «Կուրծք» հոդվածի բարձր բալլով (տես զարգացման շկալան):

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Մարմնի միջին մասը | | | | |
| 9 | Մեջքը և գոտկատեղը | 10 | 10 | Մեջքը լայն, ուղիղ կամ թեթև կորպով դեպի վեր կռացած, մոտ, առանց նվազելու թիակների հետևը և գավակի հետ միացման տեղը: | Նեղ, սուր, կախընկած, թիակների հետևը և գավակի հետ միացման տեղը նվազած: |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Մարմնի յերկարության առաջին դասի պահանջի ցուցանիշներ ունեցող կենդանիները գնահատվում են բարձր բալլով (10):

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 10 | Կողերը | 3 | 3 | Խորը, յերկար, կլորացած կողոսկրներով: | Վոչ խորը, կարճ, չափազանց տափակ կողոսկրներով: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 11 | Փորը և աճուկները | 6 | 6 | Քիփ (плотное), կախ չընկած և վերև չքաշված, կրծքի ներքին մակերեսի միացման տեղում առանց խոտորման, աճուկները քիփ սեղմված, լրացված։ | Փափուկ, կախ ընկած, չափազանց ձգված, ցեպի կուրծքը խիստ անցումով։ Աճուկները փխրուն ընկած, չլրացված։ |
| 12 | Պտուկները | 4 | 9 | Մերունի և վարազի համար ոչ պակաս 12 հավասարաչափ դասավորված պտուկներից։ Մերունների մոտ պտուկները պետք է լինեն լավ զարգացած։ | Պտուկների քանակը 12-ից պակաս, պտուկները անհամաչափ դասավորված։ |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Մեծահասակ մերուննների համար փորի ձևի մասին պահանջն իջեցվում է։

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Մարմնի հետևի մասը | | | | |
| 13 | Գավակը | 7 | 9 | Ջափավոր յերկարության, լայն, ուղիղ և մսոտ։ Պոչը յերկար, հիմքի մոտ հաստ։ | Ջափազանց կարճ, կախ ընկած, խթանաձև, պոչը կարճ, հիմքի մոտ բարակ։ |
| 14 | Զստամասը (окорока) | 8 | 8 | Լայն, մսոտ, լավ զարգացած և լրացած, իջած մինչև կրունկները, առանց խիստ սղմըվածության, կլոր։ | Կարճ, թույլ լրացած։ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 15 | Վոտները | 8 | 8 | Հայն դրվածքով, ամուր, կրունկներն առանց մոտենալու կամ թրաձևության, կապահոդերն առանց դուրս ընկնելու, կճղակներն ամուր և լայն։ Ցատկիչ հոդերը լավ զարգացած։ | Նեղ դրվածքով, թույլ, կրունկները խիստ մոտեցած կամ ծռված դեպի դուրսը, թրաձև։ Կապահոդերը չափազանց յերկար, դուրս ընկած, ցատկիչ հոդերը թույլ զարգացած, ռևմատիկ և ռախիտիկ ուռուցքներ հոդերում, թույլ, մեծությամբ միմյանց անհավասար։ |
| 16 | Վարազի սեռական օրգանները | 5 | — | Լավ զարգացած, սեռական գեղձերը հավասար մեծության, ամորձապարկը ոչ շատ ցածր, առաձգական և առանց կախ ընկնելու։ | Սեռական գեղձերը թույլ զարգացած, խիստ տարբեր մեծությունների։ Ամորձապարկը ճըմլված, կախ ընկած, ցածր։ |
| 17 | Կաշին և խոզաստևը (щетина) | 6 | 6 | Մաշկը նուրբ, ելաստիկ, բայց ոչ շատ բարակ, հոդերի վրա առանց ծալքերի։ Մազերը և խոզաստևը յերկար, բարակ, մետաքսանման, մարմինը հավասարաչափ ծածկած, առանց շատ խուճուճի։ Թույլատրվում է ալիքայնությունը։ | Կոպիտ, հաստ, կամ չափազանց բարակ, կընճռոտված, չոր, հոդերի վրա ծալքավորված։ Կոպիտ խոզաստև, թույլ մազակալում, խիստ խոզ ու բորդություն, խիստ խուճուճայնություն, չափազանց նուրբ մազեր։ |
| | Բալլերի գումարը | 100 | 100 | — | — |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Բոլոր ցեղերի և ցեղային խմբերի եքստերիերի գնահատման դեպքում, անհրաժեշտ է օգտվել հետևյալ բովանդակության օժանդակ տեղեկագրով։

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՎԵԼՎԱԾԻ ՕԺԱՆԴԱԿ ՏԵՂԵԿԱԳԻՐ

| Անունը | Անհատական համարը | Եքստերիերի հոդվածները | | | | | | | | | | | | | | | | | [illegible] | [illegible] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | | |
| | | Յուրաքանչյուր հոդվածի գնահատականը բալլերով | | | | | | | | | | | | | | | | | | |





## ԵՔՍՏԵՐԻԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՄԱՆ ԲԱՆԱԼԻ



Նկ. 1

1. Գլուխը նորմալ (չի նշվում)
2. Պրոֆիլը խիստ գոգավոր
3. Ականջները հորիզոնական
4. Թիակների հետևը սեղմված
5. Կուրծքը լայն
6. Գավակը նորմալ (չի նշվում)
7. Ջստամասը լցված
8. Կապտհոդերը թույլ
9. Մազակալումը նորմալ



Նկ. 3

1. Գլուխը կարճ
2. Պրոֆիլը նորմալ գոգավոր (չի նշվում)
3. Ականջներն ուղիղ կանգնած
4. Մեջքը կախ ընկած
5. Կուրծքը նորմալ (չի նշվում)
6. Գավակը խթմաձև (крестец шилообразный)
7. Ջստամասը նիհար
8. Վոտները իքսանման
9. Մազակալումը վատ



Նկ. 2

1. Գլուխը յերկար
2. Պրոֆիլը ուղիղ
3. Ականջներն ուղիղ կանգնած
4. Մեջքը սապատանման
5. Կուրծքը նեղ
6. Գավակը կախ ընկած
7. Ջստամասը նիհար
8. Վոտները թրաձև
9. Մազակալումը խիտ



Նկ. 4

1. Գլուխը կարճ
2. Պրոֆիլը խիստ գոգավոր
3. Ականջները կախ ընկած
4. Գոտկատեղի թուլություն (ընկած)
5. Կուրծքը լայն
6. Գավակը ուղիղ (չի նշվում)
7. Ջստամասը լրացած
8. Կապտհոդերը թույլ
9. Մազակալումը նորմալ

### ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

V—Հատկանիշը խիստ արտահայտված է ◡—Հատկանիշը թույլ է արտահայտված

Հավելված 7

## ՏՈՀՄԱՅԻՆ ԽՈԶԵՐԻ ԲՈԼՈՐ ՑԵՂԵՐԻ ՅԵՎ ՑԵՂԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՇԿԱԼԱՆ ԸՍՏ ԿԵՆԴԱՆԻ ՔԱՇԻ ՅԵՎ ՄԱՐՄՆԻ ՅԵՐԿԱՐՈՒԹՅԱՆ (բացի բերկշիրի ցեղից)։

| Հասակը ամիսներով | Կենդանի քաշը (կիլոգրամներով) | | | | | | | | Մարմնի յերկարութ. (սանտիմետր.) | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Վարազներ | | | | Մերունններ | | | | Վարազներ | | | | Մերունններ | | | |
| | Էլիտա | 1 դաս | 2 դաս | 3 դաս | Էլիտա | 1 դաս | 2 դաս | 3 դաս | Էլիտա | 1 դաս | 2 դաս | 3 դաս | Էլիտա | 1 դաս | 2 դաս | 3 դաս |
| | | Ոչ պակաս | | | | Ոչ պակաս | | | | Ոչ պակաս | | | | Ոչ պակաս | | |
| 12 | 176 | 160 | 136 | 110 | 165 | 150 | 130 | 110 | 152 | 142 | 132 | 122 | 144 | 134 | 124 | 114 |
| 13 | 188 | 170 | 145 | 149 | 178 | 163 | 143 | 122 | 155 | 145 | 135 | 125 | 147 | 137 | 127 | 117 |
| 14 | 200 | 180 | 154 | 128 | 190 | 175 | 155 | 134 | 157 | 147 | 137 | 127 | 149 | 139 | 129 | 119 |
| 15 | 210 | 190 | 162 | 135 | 190 | 175 | 155 | 134 | 159 | 149 | 139 | 129 | 151 | 141 | 131 | 121 |
| 16 | 220 | 199 | 170 | 144 | 190 | 175 | 155 | 134 | 161 | 151 | 141 | 131 | 152 | 142 | 132 | 122 |
| 17 | 228 | 208 | 178 | 150 | 195 | 180 | 158 | 136 | 163 | 153 | 143 | 133 | 153 | 143 | 133 | 123 |
| 18 | 235 | 215 | 185 | 155 | 200 | 185 | 161 | 138 | 164 | 154 | 144 | 134 | 154 | 144 | 134 | 124 |
| 19 | 240 | 220 | 192 | 158 | 203 | 188 | 165 | 141 | 165 | 155 | 145 | 135 | 154 | 145 | 135 | 125 |
| 20 | 245 | 225 | 198 | 161 | 207 | 192 | 170 | 143 | 165 | 155 | 145 | 135 | 155 | 145 | 135 | 125 |
| 21 | 250 | 230 | 202 | 164 | 213 | 198 | 175 | 145 | 166 | 156 | 146 | 136 | 156 | 146 | 136 | 126 |
| 22 | 254 | 234 | 205 | 166 | 219 | 204 | 180 | 148 | 166 | 156 | 146 | 136 | 156 | 146 | 136 | 126 |
| 23 | 257 | 237 | 208 | 168 | 225 | 210 | 185 | 150 | 167 | 157 | 147 | 137 | 157 | 147 | 137 | 127 |
| 24—26 | 260 | 240 | 210 | 170 | 225 | 210 | 185 | 150 | 167 | 157 | 147 | 137 | 157 | 147 | 137 | 127 |
| 27—29 | 263 | 243 | 213 | 173 | 228 | 213 | 188 | 153 | 168 | 158 | 148 | 138 | 158 | 148 | 138 | 128 |
